**Քաղծառայություն**

*Հարց* 1.(06.3491) Քրեակատարողական ծառայությունում քաղաքացիական հատուկ ծառայության պաշտոնների յուրաքանչյուր խմբի ընդհանուր նկարագիրը հաստատում է

1. ՀՀ կառավարությունը
2. Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ծառայության խորհուրդը
3. Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարը
4. Քրեակատարողական վարչության պետը

*(2)*

*Հարց* 2.(06.3492) Քրեակատարողական ծառայությունում քաղաքացիական հատուկ ծառայության պաշտոնների անվանացանկը հաստատում (փոփոխում) է

1. Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ծառայության խորհուրդը
2. Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարը
3. Քրեակատարողական վարչության պետը
4. ՀՀ կառավարությունը

*(1)*

*Հարց* 3.(06.3493) Քրեակատարողական ծառայությունում քաղաքացիական ծառայության պաշտոնների հաստիքացուցակը հաստատում (փոփոխում) է

1. Հայաստանի Հանրապ"տության քաղաքացիական ծառայության խորհուրդը
2. ՀՀ կառավարությունը
3. Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարը
4. Քրեակատարողական վարչության պետը

*(3)*

*Հարց* 4.(06.3494) Քրեակատարողական ծառայությունում քաղաքացիական հատուկ ծառայության պաշտոնների անձնագրերը հաստատում (փոփոխում) է

1. Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ծառայության խորհուրդը
2. ՀՀ կառավարությունը
3. Քրեակատարողական վարչության պետը
4. Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարը

*(4)*

*Հարց* 5.(06.3495) Քրեակատարողական ծառայությունում քաղաքացիական հատուկ ծառայության պաշտոն զբաղեցնելու իրավունք ունի այն անձը, ով

1. դատական կարգով ճանաչվել է անգործունակ կամ սահմանափակ գործունակ
2. դատական կարգով զրկվել է պետական կամ համայնքային ծառայության որևէ պաշտոն զբաղեցնելու իրավունքից
3. դատապարտվել է հանցագործության համար, և դատվածությունը սահմանված կարգով հանված կամ մարված է
4. օրենքով սահմանված կարգի խախտումով չի անցել պարտադիր զինվորական ծառայություն

*(3)*

*Հարց* 6.(06.3496) Քրեակատարողական ծառայությունում քաղաքացիական հատուկ ծառայության թափուր պաշտոնը զբաղեցվում է

1. միայն արտամրցութային կարգով
2. արտամրցութային կարգով կամ մրցույթով
3. միայն մրցույթով

*(2)*

*Հարց* 7.(06.3497) Քրեակատարողական ծառայությունում քաղաքացիական հատուկ ծառայության թափուր պաշտոնում արտամրցութային կարգով կարող է նշանակվել քաղաքացիական հատուկ ծառայության կադրերի ռեզերվում գրանցված այն քաղաքացիական ծառայողը, որը

1. միաժամանակ բավարարում է տվյալ թափուր պաշտոնի անձնագրի պահանջները, համարվում է քաղաքացիական հատուկ ծառայության միևնույն խմբի պաշտոն զբաղեցնող կամ առնվազն ունի տվյալ թափուր պաշտոնի համար նախատեսված քաղաքացիական հատուկ ծառայության դասային աստիճան, այդ մասին տվել է գրավոր համաձայնություն
2. բավարարում է տվյալ թափուր պաշտոնի անձնագրի պահանջները և առնվազն ունի տվյալ թափուր պաշտոնի համար նախատեսված քաղաքացիական հատուկ ծառայության դասային աստիճան
3. համարվում է քաղաքացիական հատուկ ծառայության միևնույն խմբի պաշտոն զբաղեցնող և այդ մասին տվել է գրավոր համաձայնություն

*(1)*

*Հարց* 8.(06.3498) Քրեակատարողական ծառայությունում քաղաքացիական հատուկ ծառայության թափուր պաշտոններ զբաղեցնելու համար մրցույթ անցկացնելու մասին հայտարարությունը հրապարակվում է մրցույթն անցկացնելուց ոչ ուշ քան

1. մեկ ամիս առաջ
2. երեք ամիս առաջ
3. 15 օր առաջ
4. վեց ամիս առաջ

*(1)*

*Հարց* 9.(06.3499) Քրեակատարողական ծառայությունում քաղաքացիական հատուկ ծառայության թափուր պաշտոններ զբաղեցնելու համար մրցույթ անցկացնելու մասին հայտարարությունը հրապարակվում է

1. առնվազն երկու հազար տպաքանակ ունեցող մամուլի և զանգվածային լրատվության այլ միջոցներով
2. առնվազն հազար տպաքանակ ունեցող մամուլի ևզանգվածային լրատվության այլ միջոցներով
3. առնվազն երեք հազար տպաքանակ ունեցող մամուլի և զանգվածային լրատվության այլ միջոցներով

*(3)*

*Հարց* 10.(06.3500) Քրեակատարողական ծառայությունում քաղաքացիական հատուկ ծառայության թափուր պաշտոն զբաղեցնելու համար անցկացվող մրցույթը կարող է անցկացվել

1. միայն համակարգչի միջոցով
2. համակարգչի միջոցով կամ գրավոր
3. միայն գրավոր
4. բանավոր

*(2)*

*Հարց* 11.(06.3501) Քրեակատարողական ծառայությունում քաղաքացիական հատուկ ծառայության թափուր պաշտոն զբաղեցնելու համար անցկացվող մրցույթի համակարգչում զետեղված հարցաշարը պետք է հրապարակվի ոչ ուշ, քան մրցույթ անցկացնելուց

1. մեկ ամիս առաջ
2. երկու ամիս առաջ
3. երեք ամիս առաջ

*(1)*

*Հարց* 12.(06.3502) Քրեակատարողական ծառայությունում քաղաքացիական հատուկ ծառայության թափուր պաշտոն զբաղեցնելու համար անցկացվող մրցույթի երկրորդ` հարցազրույցի փուլին մասնակցելու իրավունք են ձեռք բերում թեստավորման առաջադրանքների առնվազն

1. 70 տոկոսին ճիշտ պատասխանած մասնակիցները
2. 80 տոկոսին ճիշտ պատասխանած մասնակիցները
3. 90 տոկոսին ճիշտ պատասխանած մասնակիցները

*(2)*

*Հարց* 13.(06.3503) Քրեակատարողական ծառայությունում քաղաքացիական հատուկ ծառայության թափուր պաշտոն զբաղեցնելու համար անցկացվող մրցույթի հաղթող են ճանաչվում այն մասնակիցները, ովքեր քվեարկության արդյունքով հավաքել են մրցութային հանձնաժողովի

1. քվեարկությանը մասնակցած բոլոր անդամների կողմ ձայները
2. քվեարկությանը մասնակցած անդամների առնվազն կեսի կողմ ձայները
3. քվեարկությանը մասնակցած անդամների կեսից ավելի կողմ ձայները

*(3)*

*Հարց* 14.(06.3504) Քրեակատարողական ծառայությունում քաղաքացիական հատուկ ծառայության թափուր պաշտոն զբաղեցնելու համար անցկացվող մրցույթի արդյունքն"րը հրապարակվում են մրցույթն անցկացնելուց հետո

1. նույն օրը
2. հաջորդ օրը
3. եռօրյա ժամկետում
4. մեկ շաբաթվա ընթացքում

*(1)*

*Հարց* 15.(06.3505) Քրեակատարողական ծառայությունում քաղաքացիական հատուկ ծառայության բարձրագույն պաշտոններում նշանակում և այդ պաշտոններից ազատում է

1. Հայաստանի Հանրապետության Նախագահը
2. Հայաստանի Հանրապետության կառավարությունը
3. Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարը
4. քրեակատարողական վարչության պետը

*(3)*

*Հարց* 16.(06.3506) Քրեակատարողական ծառայությունում քաղաքացիական հատուկ ծառայության գլխավոր, առաջատար և կրտսեր պաշտոններում նշանակում և այդ պաշտոններից ազատում է

1. Հայաստանի Հանրապ"տության Նախագահը
2. Հայաստանի Հանրապետության կառավարությունը

3. Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարը
4. քրեակատարողական վարչության պետը

*(4)*

*Հարց* 17.(06.3507) Քաղաքացիական ծառայողի անմիջական ղեկավարը քաղաքացիական ծառայողի ծառայողական բնութագիրը ներկայացնում է

1. ատեստավորման օրը
2. ատեստավորումից առնվազն երկու շաբաթ առաջ
3. ատեստավորումից առնվազն տասն օր առաջ

*(2)*

*Հարց* 18.(06.3508) Քրեակատարողական ծառայությունում յուրաքանչյուր քաղաքացիական հատուկ ծառայող

1. առնվազն երեք տարին մեկ ենթակա է պարտադիր վերապատրաստման
2. յուրաքանչյուր տարի ենթակա է պարտադիր վերապատրաստման
3. իր ցանկությամբ՝ գրավոր դիմումի հիման վրա կարող է վ"րապատրաստվել

*(1)*

*Հարց* 19.(06.3509) Նշվածներից որն է ճիշտ

1. քրեակատարողական ծառայությունում քաղաքացիական հատուկ ծառայության կադրերի ռեզերվում միանգամյա գտնվելու առավելագույն ժամկետը երեք ամիս է, բայց ոչ ավելի, քան կադրերի ռեզերվում գրանցված անձի 65 տարին լրանալը
2. քրեակատարողական ծառայությունում քաղաքացիական հատուկ ծառայության կադրերի ռեզերվում միանգամյա գտնվելու առավելագույն ժամկետը վեց ամիս է, բայց ոչ ավելի, քան կադրերի ռեզերվում գրանցված անձի 60 տարին լրանալը
3. քրեակատարողական ծառայությունում քաղաքացիական հատուկ ծառայության կադրերի ռեզերվում միանգամյա գտնվելու առավելագույն ժամկետը վեց ամիս է, բայց ոչ ավելի, քան կադրերի ռեզերվում գրանցված անձի 65 տարին լրանալը

*(3)*

*Հարց* 20.(06.3510) Նշվածներից որը քրեակատարողական ծառայությունում քաղաքացիական հատուկ ծառայողի հիմնական իրավունքներից չէ

1. իրավական պաշտպանությունը, այդ թվում՝ քաղաքական հետապնդումներից
2. զբաղեցրած պաշտոնում իր իրավունքները և պարտականությունները սահմանող իրավական ակտերին ծանոթանալը
3. պետական բյուջեի, ինչպես նաև Հայաստանի Հանրապ"տության օրենսդրությամբ չարգելված այլ միջոցների հաշվին վերապատրաստվելը
4. մասնագիտական և ծառայողական պարտականությունների կատարման համար այլ անհրաժեշտ գիտելիքներ ապահովելը

*(4)*

*Հարց* 21.(06.3511) Նշվածներից որը քրեակատարողական ծառայությունում քաղաքացիական հատուկ ծառայողի հիմնական պարտականություններից չէ

1. իր անձնական գործի բոլոր նյութերին, իր գործուն"ության գնահատականներին և այլ փաստաթղթերին ծանոթանալը և բացատրություններ ներկայացնելը

2. սահմանված կարգով և ժամկետներում առաջարկություններ, դիմումներ և բողոքներ քննության առնելը և դրանց ընթացք տալը

3. վերադաս մարմինների և պաշտոնատար անձանց սահմանված կարգով տված հանձնարարականները և ընդունած որոշումները կատարելը

*(1)*

*Հարց* 22.(06.3512) Քրեակատարողական ծառայությունում քաղաքացիական հատուկ ծառայողն իրավունք ունի

1. ոչ ծառայողական նպատակներով օգտագործելու նյութատեխնիկական, ֆինանսական և տեղեկատվական միջոցները, պետական այլ գույքը և ծառայողական տեղեկատվությունը

2. անձամբ զբաղվելու ձեռնարկատիրական գործունեությամբ

3. կատարելու գիտական, մանկավարժական, ստեղծագործական և բուժական վճարովի աշխատանք

*(3)*

*Հարց* 23.(06.3513) Քրեակատարողական ծառայությունում քաղաքացիական հատուկ ծառայողն իրավունք ունի

1. լինելու երրորդ անձանց ներկայացուցիչն այն մարմնի հետ կապված հարաբերություններում, որտեղ ինքը ծառայության մեջ է, կամ որն անմիջականորեն ենթակա է իրեն կամ անմիջականորեն վերահսկելի է իր կողմից

2. հոնորար ստանալու ծառայողական պարտականությունների կատարումից բխող հրապարակումների կամ ելույթների համար

3. ծառայողական նպատակներով օգտագործելու նյութատեխնիկական, ֆինանսական և տեղեկատվական միջոցները, պետական այլ գույքը և ծառայողական տեղեկատվությունը

*(3)*

*Հարց* 24.(06.3514) Քրեակատարողական ծառայությունում քաղաքացիական հատուկ ծառայողը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով պարտավոր է

1. քրեակատարողական ծառայությունում քաղաքացիական հատուկ ծառայության պաշտոնի նշանակվելուց հետո՝ մեկ ամսվա ընթացքում, առևտրային կազմակերպությունների կանոնադրական կապիտալում 30 տոկոս բաժնեմաս ունենալու դեպքում դա հանձնել հավատարմագրային կառավարման

2. քրեակատարողական ծառայությունում քաղաքացիական հատուկ ծառայության պաշտոնի նշանակվելուց հետո՝ մեկ ամսվա ընթացքում, առևտրային կազմակերպությունների կանոնադրական կապիտալում 10 տոկոս բաժնեմաս ունենալու դեպքում դա հանձնել հավատարմագրային կառավարման

3. քրեակատարողական ծառայությունում քաղաքացիական հատուկ ծառայության պաշտոնի նշանակվելուց հետո՝ մեկ ամսվա ընթացքում, առևտրային կազմակերպությունների կանոնադրական կապիտալում 5 տոկոս բաժնեմաս ունենալու դեպքում դա հանձնել հավատարմագրային կառավարման

*(2)*

*Հարց* 25.(06.3515) Պետությունը քրեակատարողական ծառայությունում քաղաքացիական հատուկ ծառայողի համար չի երաշխավորում

1. վարձատրություն, իր զբաղեցրած պաշտոնի ենթախմբին համապատասխանող դասային աստիճանից ավելի բարձր դասային աստիճանի համար հավելավճար և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված այլ վճարներ

2. ծառայողական պարտականությունների կատարման համար անվտանգ և անհրաժեշտ աշխատանքային պայմաններ

3. անձեռնմխելիություն

4. ամենամյա վճարովի արձակուրդ

*(3)*

*Հարց* 26.(06.3516) Երկարամյա ծառայության, ինչպես նաև ծառայողական պարտականությունները և հատուկ առաջադրանքները գերազանց կատարելու համար քրեակատարողական ծառայությունում քաղաքացիական հատուկ ծառայողի նկատմամբ չի կարող կիրառվել խրախուսանքի հետևյալ տեսակը

1. հուշանվերով պարգևատրում
2. կրծքանշանով պարգևատրում
3. լրացուցիչ վճարովի արձակուրդի տրամադրում
4. կարգապահական տույժի հանում

*(2)*

*Հարց* 27.(06.3517) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով քրեակատարողական ծառայությունում քաղաքացիական հատուկ ծառայողի նկատմամբ չի կարող կիրառվել հետևյալ կարգապահական տույժը

1. խիստ նկատողություն
2. զբաղեցրած պաշտոնից ազատում
3. զբաղեցրած պաշտոնի իջեցում
4. քաղաքացիական հատուկ ծառայության ավելի բարձր դասային աստիճանի (բացառությամբ քաղաքացիական հատուկ ծառայության բարձրագույն դասային աստիճանի) իջեցում՝ մեկ աստիճանով

*(3)*

*Հարց* 28.(06.3518) Քրեակատարողական ծառայությունում քաղաքացիական հատուկ ծառայողին պաշտոնից ազատելու հիմքերից չէ

1. ժամանակավոր անաշխատունակության հետևանքով մեկ տարվա ընթացքում երեք ամիս աշխատանքի չներկայանալը, չհաշված հղիության և ծննդաբերության արձակուրդը
2. օրենքով սահմանված դեպքում իր եկամուտների հայտարարագիրը չներկայացնելը
3. հաստիքների կրճատումը

*(1)*

*Հարց* 29.(06.3519) Քրեակատարողական ծառայությունում քաղաքացիական հատուկ ծառայության պաշտոն զբաղեցնելու առավելագույն տարիքը

1. 55 տարին է
2. 60 տարին է
3. 50 տարին է
4. 65 տարին է

*(4)*

*Հարց* 30.(06.3520) Քրեակատարողական ծառայությունում քաղաքացիական հատուկ ծառայության մասին օրենսդրության կիրառման հետ կապված վեճերը լուծվում են

1. արդարադատության նախարարի կողմից կամ դատական կարգով
2. քրեակատարողական հիմնարկի պետի կողմից կամ դատական կարգով
3. քաղաքացիական ծառայության խորհրդի կողմից կամ դատական կարգով

*(1)*

*Հարց* 31.(06.3521) Քրեակատարողական ծառայությունում քաղաքացիական հատուկ ծառայության պաշտոն զբաղեցնելու առավելագույն տարիքը լրանալու դեպքում քաղաքացիական ծառայողը տվյալ պաշտոնում նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձի որոշմամբ կարող է

1. մինչև վեց ամիս ժամկետով շարունակել զբաղեցնել իր պաշտոնը
2. մինչև մեկ տարի ժամկետով շարունակել զբաղեցնել իր պաշտոնը
3. մինչև տասնութ ամիս ժամկետով շարունակել զբաղեցնել իր պաշտոնը

*(2)*

*Հարց* 32.(06.3522) Քրեակատարողական ծառայությունում քաղաքացիական հատուկ ծառայողի նկատմամբ կիրառվող խրախուսանքի տեսակ չէ

1. օրենքով սահմանված կարգով աշխատավարձի բարձրացումը
2. հուշանվերով պարգևատրումը
3. լրացուցիչ վճարովի արձակուրդի տրամադրումը
4. միանվագ դրամական պարգևատրումը

*(1)*

*Հարց* 33.(06.3523) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով քրեակատարողական ծառայությունում քաղաքացիական հատուկ ծառայողի նկատմամբ չի կարող կիրառվել հետևյալ կարգապահական տույժը

1. օրենքով սահմանված կարգով աշխատավարձի իջեցում
2. զբաղեցրած պաշտոնից ազատում
3. քաղաքացիական հատուկ ծառայության ավելի բարձր դասային աստիճանի (բացառությամբ քաղաքացիական հատուկ ծառայության բարձրագույն դասային աստիճանի) իջեցում՝ մեկ աստիճանով

*(1)*

*Հարց* 34.(06.3524) Քրեակատարողական ծառայությունում քաղաքացիական հատուկ ծառայողին իր զբաղեցրած պաշտոնի համար նախատեսված քաղաքացիական հատուկ ծառայության դասային աստիճանից ավելի բարձր դասային աստիճան, բացառությամբ քաղաքացիական հատուկ ծառայության բարձրագույն դասային աստիճանի, շնորհվում է համապատասխան դասային աստիճանն ստանալուց

1. ոչ շուտ, քան երկու տարի հետո
2. ոչ շուտ, քան հինգ տարի հետո
3. ոչ շուտ, քան երեք տարի և ոչ ուշ, քան հինգ տարի հետո

*(3)*

*Հարց* 35.(06.3525) Նշվածներից որը քրեակատարողական ծառայությունում քաղաքացիական հատուկ ծառայության պաշտոնների դասակարգման խմբերից չէ

1. քաղաքացիական հատուկ ծառայության գլխավոր խմբի պաշտոններ
2. քաղաքացիական հատուկ ծառայության բարձրագույն խմբի պաշտոններ
3. քաղաքացիական հատուկ ծառայության միջին խմբի պաշտոններ
4. քաղաքացիական հատուկ ծառայության կրտսեր խմբի պաշտոններ

*(3)*

*Հարց* 36.(06.3526) Քրեակատարողական ծառայությունում քաղաքացիական հատուկ ծառայության պաշտոնների բարձրագույն խումբը

1. բաժանվում է 1-ին, 2-րդ և 3-րդ ենթախմբերի

2. բաժանվում է 1-ին և 2-րդ ենթախմբերի
3. չի բաժանվում ենթախմբերի

*(3)*

*Հարց* 37.(06.3527) Քրեակատարողական ծառայությունում քաղաքացիական հատուկ ծառայության պաշտոն զբաղեցնելու իրավունք ունի այն անձը, ով

1. դատապարտվել է հանցագործության համար, և դատվածությունը սահմանված կարգով հանված կամ մարված չէ
2. դատական կարգով զրկվել է պետական կամ համայնքային ծառայության որևէ պաշտոն զբաղեցնելու իրավունքից
3. օրենքով սահմանված կարգով չի անցել պարտադիր զինվորական ծառայություն

*(3)*

*Հարց* 38.(06.3528) Քրեակատարողական ծառայությունում քաղաքացիական հատուկ ծառայության թափուր պաշտոններ զբաղեցնելու համար անցկացվող մրցույթի նախապատրաստական աշխատանքներն իրականացնում է

1. քրեակատարողական ծառայության համապատասխան ստորաբաժանումը
2. քաղաքացիական ծառայության խորհրդի համապատասխան ստորաբաժանումը
3. մրցութային հանձնաժողովը

*(1)*

*Հարց* 39.(06.3529) Քրեակատարողական ծառայությունում քաղաքացիական հատուկ ծառայողի նկատմամբ կարգապահական տույժ նշանակվում է, եթե կարգապահական խախտման հայտնաբերման օրվանից չի անցել

1. վեց ամսից ավելի` չհաշված հիվանդությունը կամ գործուղման մեջ գտնվելը
2. երեք ամսից ավելի` չհաշված հիվանդությունը կամ գործուղման մեջ գտնվելը
3. մեկ տարուց ավելի` չհաշված հիվանդությունը կամ գործուղման մեջ գտնվելը

*(1)*

*Հարց* 40.(06.3530) Քրեակատարողական ծառայությունում քաղաքացիական հատուկ ծառայողի նկատմամբ կարգապահական տույժ չի նշանակվում, եթե կարգապահական խախտում կատարելու օրվանից անցել է

1. երեք ամսից ավելի
2. վեց ամսից ավելի
3. մեկ տարուց ավելի

*(3)*

*Հարց* 41.(06.3531) Քրեակատարողական ծառայությունում քաղաքացիական հատուկ ծառայողին պաշտոնից ազատելու հիմք է

1. ատեստավորմանը չներկայանալը
2. ատեստավորմանը երեք անգամ չներկայանալը
3. վերապատրաստմանը չներկայանալը

*(2)*

*Հարց* 42.(06.3532) Քաղաքացիական հատուկ ծառայության պաշտոնի նշանակման կրկնակի մրցույթի ժամանակ

1. մրցույթին մասնակցելու համար նոր դիմումներ չեն ընդունվում, և այն անցկացվում է 10-օրյա ժամկետում` ընդհանուր հիմունքներով

2. մրցույթին մասնակցելու համար ընդունվում են նոր դիմումներ, և այն անցկացվում է 20-օրյա ժամկետում՝ ընդհանուր հիմունքներով

3. մրցույթին մասնակցելու համար նոր դիմումներ չեն ընդունվում, և այն անցկացվում է 20-օրյա ժամկետում՝ ընդհանուր հիմունքներով

*(1)*

*Հարց* 43.(06.3533) Քրեակատարողական ծառայությունում քաղաքացիական հատուկ ծառայողների փաստաթղթային ատեստավորման արդյունքներով ատեստավորման հանձնաժողովը ընդունում է հետևյալ որոշումը

1. ատեստավորումը հետաձգել և քաղաքացիական հատուկ ծառայողին գործուղել վերապատրաստման
2. ենթակա է ատեստավորման թեստավորման և հարցազրույցի միջոցով
3. չի համապատասխանում զբաղեցրած պաշտոնին

*(2)*

*Հարց* 44.(06.3534) Քրեակատարողական ծառայությունում քաղաքացիական հատուկ ծառայողների թեստավորման և հարցազրույցի արդյունքներով ատեստավորման հանձնաժողովը չի ընդունում հետևյալ որոշումը

1. համապատասխանում է զբաղեցրած պաշտոնին
2. ատեստավորումը հետաձգել և քաղաքացիական հատուկ ծառայողին գործուղել վերապատրաստման
3. չի համապատասխանում զբաղեցրած պաշտոնին

*(2)*

*Հարց* 45.(06.3535) Քրեակատարողական ծառայությունում քաղաքացիական հատուկ ծառայողների կադրերի ռեզերվը վարում է

1. քաղաքացւական ծառայության խորհուրդը
2. արդարադատության նախարարությունը
3. քրեակատարողական վարչությունը

*(3)*